





ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹԻՒ 2

329.14

ՍՕՑԻԱԼ—ԴԷՄՕԿՐԱՏ  
ՀՆՋԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
ՄԱՍՆԱՃԻՒԼԵՐԻՆ

ՍԻՐԵԼԻ՝ ԸՆԿԵՐՆԵՐ՝,

Տաճիկ կառավարությունը՝ օգտակար էր և բարձրակարգ հասարակականություններից, այս անգամ էլ կարողացաւ փոխանակել տալ Հայկական Հարցը:

Հայ ժողովուրդը՝ սանձանքի պրկոյ ծանրութեան տակ ճնշւած, նորից իր ակնկալութիւնների մէջ հիասթափւած, բայց խրոխտ իր նախատակութեան բոլոր երանգաւորումների մէջ և պատ թմբկեցնոյ մրտաւոմներից, այս անգամ էլ հաւատք կազմեց՝ թէ նա որ «Հայաստան էր ցանկանում առանց Հայի»,\*, նա, որի «նաեւրը չէին կարող բարձրանալ Հայաստանի լեռների վրայ»,\*, նա՝ որ «իր պամերանիայի դիմորի սեկորների հետ չէր փոխիլ Հայկական Հարցը»,\*, նրանց համար Հայկական Հարցը լոկ մի միջոց է իրենց շահերը դատարելու: Այո՛, Հայր հաւատ կազմեց, որ դիւանագիտական այսպիսի գոհար փիլիսոփայութիւն ունեցող կառավարությունների համար Հայի մարտիրոսացութիւնը լոկ մի պատրակ է Հայի մակարդւած արիւնք այդ դիւանագետների ձեռքին մի խայժ է՝ թրքական ուղիւնսոսի մէջ ձուկեր սրտայու—առանձնաշնորհումներ ձեռք բերելու:

Հայր մի անգամ ևս համոզեց, որ իր փրկութիւնը՝ իր հարպտ կենսահիթթը յեղափոխական գործին կամօվին ի սպաս դնելու մէջն է կայանում:

Եւ նա փարեց Ս. Գ. Հնչակեան թէգին ու նրա առաջադրած միջոցին՝ արհամարհանքի նողկանք արտայայտելով գէպի հայութեան այն մտայնութիւնները, որոնք գեւ բարենորոգումների ծնունդը

- \*Կակնարկէ Ռուս Չարը,
- \*Կակնարկէ Անգղիա,
- \*Կակնարկէ Գերման Քայզրը,



Հայր խորհուրդ 56 22

չտեսած, ստրուկի ողնայարով, դիւանապէտներէ առջեւ կրեցին՝ իրենց ստրկական օրհներգները ներբողելու, ինչպէս մի քանի տարի առաջ, «Սահմանադրութեան» առթիւ, Մեծ-Մարզասպանին ներբողեցին՝

«Իսկ ո՞վ է իմ աստղիկ,

Եթէ ոչ դու, Սուլթան Արդ-իւլ-Համիտ.

Մեռնիմ աստղիս, սիրականիս, քազաւորի՛ս»:

Հայութեան Եօթպիսեան հրէշը՝ հայի սիրակա՛նը, հայի աստղի՛կը, հայի թագաւո՛րը...

— Իսկ Ատանա՞ն, Իթթիհատի հայահալածութիւ՞նը...

Օ՛, «Եթէ այսօր չարիք մոռնան մեր որդիք,

«Ամբողջ աշխարհ Հայուն կուտայ նախատինք»:

Պատմութիւնը կայ՝ արդա՛ր, անկաշա՛ն, վրէժինդի՛ր:

Եւ մինչ Հայ աղայականութիւնը եւ նրա ծախւած մտաւորականութիւնը օրհներգութիւններ է վերընծայում Դիւանապետութեան ու թիւրք կառավարութեան, ազգի սիւնը եղող բուն ժողովուրդը Հաւարի կարգախօսն է տալիս Հնչակեան կուսակցութեան:

Տաճիկի սուր աչքը տեսնում է այս: Եւ Իթթիհատ-թէրապղըն— ինքը թիւրք կառավարութիւնը— հրէշային միջոցների է դիմում թոյնով սպանելու Կեղրոնական Վարչութեանս անդամներին— Հայ ժողովրդի սրտացաւ եւ կամքը ներկայացնող միակ կուսակցութեան անդամներին: Եւ դեռ «բարենորոգումներ»ի գաւելտի վերջին վարագոյրը շիջած, Երկրի բոլոր անկիւններից զուլումի մորմօքիչ ձայնն է, որ լսում է եւ բմբոստ Ողին միջոցներ պահանջում՝ իր աղատութիւնը իր սեփական ձեռքերով կերտելու:

Ընկերնե՛ր,

Պարագան ծանր է ու դժուարատար: Ձեր վրայ, Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան վրայ պարտականութեան զերազոյն հրամայականն է զբուսմ մէջ բերելու իր համախոհութիւնը, ի մի ձուլւած, զանգւած իր բոյս՛ր կարողութիւնները— բարոյական, մտաւոր եւ նիւթական:

Ազգային մեծ վտանգի առաջ, օրէնք է, պիտի ցրեն, անէանան նոյնիսկ մեծամեծ շահերը, պիտի հարթելին բոլոր հակադրութիւնները, եւ տարրեր կարծիքներն ու տեսակէտները մէկ յայտարարի վերածւած՝ միաբան ընթանան մտքերը, զգացումները, գործողութիւնները: Մեծ գործի առջեւ չքանում է անհատը եւ զրութեան տէրը դառնում ընդհանուրի շահը— Ազգային Մեծ կամքը:

Սակայն սրտի ցաւով եւ ամօթի գալարումներով ենք արձանադրում

րնկերներէց ոմանց մէջ եղած մանր մտայնութիւնները, փոքրիկ յըզացումները, որոնցմով կուսակցութեանս շարքերը պտտակաման եւ անդործութեան տենդով վարակելու ոչ մի ջանք չի խնայում՝ իրենց կրակէտ բնգունելով ա՛յն թիւ 7 շրջաբերականը, որ ստորադրած է րնկերներ Մուրատ եւ Զաքարեանի կողմից եւ արտասահմանեան մեր մասնաճիւղերին զրկւած պրօփակատոր մի թերթի միջոցով :

Հնչակեան կուսակցութիւնը՝ ինչպէս ցարդ՝ այսուհետեւ էլ կը լինի բնդունակ դիմադրակելու այսպիսի փորձութիւններին, բայց ախտո՞ւ ժամանակին, որ սպառուեց, եւ սպառուեմ է, անտեղի, մաշիչ, հիւժող եւ կործանարար բամբասանքով, մինչ գործը երեսի վըրայ ձգուած՝ Երկրի կազմակերպութիւնները մէկը միւսի յետեւից քայքայում էին...

Քաղաքական անցքերի այն հրատապ միջոցին, երբ Արեւելեան Խնդիրը դիւանադիտական լուծման առարկայ էր հանդիսացել, երբ Հայկական Խնդիրն էլ, որպէս յիշեալ խնդրի բաղկացուցիչ մէկ յօդւածը, նորից քաղաքակիրթ աշխարհի ուշադրութիւնն էր դրուում, երբ Կեղրոնական Վարչութիւնս կլանւած էր եւրոպական պրօպականդայով եւ կուսակցութեանս գերագոյն շահերով, այսպիսի պատմական մի շրջանում, ասում ենք, երբ ներքին ինքնամփոփման, սերտ, համերաշխ ու ներդաշնակ գործունէութեան պէտքը ունէինք, մենք խոհեմութիւն չէինք համարել, եւ չենք համարում, ներքին այսպիսի ջլատիչ գործերով զբաղուելը: Բայց, որովհետեւ նախորդ Վարիչ Մարմնի կրկնակ շրջաբերականների մեր կողմից վերոյիշեալ նկատումներով անպատասխանի թողնելը զանազան մեկնութիւնների տեղիք է տւել, որոնք կարող են նորանոր բարդութիւններ առաջացնել, ուստի, որքան էլ մեզ համար իսկապէս մի տխուր եւ ցաւալի պարտականութիւն է ձեռք առնել այնպիսի միջոցներ, որոնք հակառակ են ժամանակի պահանջներին, այնուամենայնիւ, կուսակցական կարգապահութիւնն ու պարտաճանաչութիւնը ստիպում են մեզ հրակել ա՛յն ամեն գործողութիւնների վրայ, որոնք կուսակցական բնոյթ են կրում, լինի այդ անհատ րնկերների թէ՛ հաւաքական մարմինների կողմից:

Մեկնելով կազմակերպական շահի այդ նկատողութիւններից, Կեղրոնական Վարչութիւնս սրանով յայտարարում է, որ որպէս նախորդ Վարիչ Մարմնից բղխած եւ Մուրատ ու Զաքարեան ստորագրութիւնը կրող թիւ 7 շրջաբերականը հիմնովին հակառակ է իրողութիւններին, չի պարունակում ՄԻ ՏՈՂ իսկ, որ ճշմարտութեան

մօտիկ լինի եւ որը հրատարակւած է շարքերը քանդելու միակ նպատակով :

Ի՞նչ է ստում այդ շրջաբերականը : Ի՞նչ հիմունքների վրայ կանգնած փորձում է կատարել տակ դնել է-րդ Ընդհ. Պատգամաւորական Ժողովի օրինաւորութիւնը :

- 1.— Որ է-րդ Ընդհ. Պատգ. Ժողովի շրջաբերականները «զբր-կուած էր Պօլիս անպաշտօն անհատի մը» :
- 2.— «Որուն քով ամիսներ մնայէ ու մէկ մասն ալ փճանայէ վերջ մասնաւոր հետապնդումներով դանձաբ ձեռք անցուցինք եւ մասնաճիւղերուն զրկեցինք» :
- 3.— «Սակայն թիւով անբաւական ըլլալուն, կարելի չեղաւ բո-լոր մասնաճիւղերուն զրկելը» :
- 4.— «Այս պարագան հաղորդելով պատկանեալ մարմնոյն շրջաբերականներէն մաս մըն ալ ուղեցինք, որպէսզի չի զրկուած մասնաճիւղերուն զրկենք : Բայց դժբաղդարար չի զրկեցին, որով կարգ մը մասնաճիւղեր չի կրցան ստանալ :

Հնչակեան Կուսակցութեան քառորդ դարւան յեղափոխական կեանքին մէջ առաջին անգամն է, որեմն տեսնուած մի մարմին, որ յանդգնութիւնն է ունենում կուսակցութեանս գերագոյն Ժողովին զէմ ըմբոստանալու այսպիսի անհեթեթ առարկութիւններով.—

- 1.— Որ՝ շրջաբերականները զրկուած են Կիրակոսի միջոցաւ եւ ոչ թէ Մարկոսի :
- 2.— Որ՝ շրջաբերականների թիւը եղած է 90 եւ ոչ՝ 95 :
- 3.— Որ՝ մասնաճիւղերը այդ շրջաբերականները ստացած են Մայիս ամսի 25-ին եւ ոչ թէ 20-ին :
- 4.— Որ՝ պատկանեալ մարմինը (Կեդրոնը) քանի մը հաս շրջաբերական եւս չէ ուղարկած :

Եթէ մի պահ ընդունելու լինէինք թէ՛ ընկերներ Մուրատ եւ Զաքարեանի վերոյիշեալ առարկութիւնները հիմնաւոր են, ժիթէ՞ նրանք դօրեղ պատճառներ կարող էին համարել՝ Ընդհ. Պատգ. Ժողովի զէմ իրենց ըմբոստացումը, իրենց անկարգապահական այս աննախընթաց արարքը արդարացնելու համար : Ընդհ. Պատգ. Ժողովի յաջողութեանը մասին իսկապէս մտահոգուող մի մարմին, Մայիսից մինչեւ Օգոստոս, միթէ՞ չէր կարող առանձին նամակներով կամ շրջաբերականներով Ժողովի տեղն ու ժամանակը յայտնել այն «կարգ մը մասնաճիւղերուն», որոնք, իբր թէ, «չի կրցան ստանալ» Կեդրոնի շրջաբերականներից, «թիւով անբաւական ըլլալուն հա-

մար» :

Բայց տեսնենք իրողութիւնները իրենց նկարագրածին նման են : Կա՞յ արդեօք ճշմարտութեան ամենաազօտ նշոյլ իսկ իրենց շորս գլխաւոր պատճառարանութիւնների մէջ :

— Մեր պատասխանն է, — ՈՉ :

Բացատրենք :

1. — Է.—րդ Ընդհ. Պատգ. Ժողովի շրջաբերականները զրկւել են Պոլիս ոչ թէ «անպաշտօն» անհատի մը, այլ Կեդր. Վարչութեան Լիազօր ներառացուցիչ ընկ. Տօքթ. Պէննէին, որը պաշտօնական անձնաւորութիւն էր : Կեդրոնը, համաձայն Զ.—րդ Ընդհ. Պատգ. Ժողովի որոշման, Տաճկաստանի լէզալ Շրջանին վերաբերեալ եղած իր բոլոր կարողաբութիւնները պիտի անէր իր ներկայացուցչի միջոցաւ, որ և է կատարած է ամենայն օրինաւորութեամբ :

2. — Մեր շրջաբերականները ոչ թէ «ամիսներ մնալէ ևւ «մէկ մասն ալ փճանալէ վերջ, մասնաւոր հետապնդումներով իրենց ձեռքը անցած է», այլ անմիջապէս յանձնւել է, ինչպէս կը տեսնուի մեր ներկայացուցչի այդ առթիւ գրած նամակի հետեւեալ տողերից. —

Կ. Պոլիս, 7 Մայիս, 1913

«Առի շրջաբերականները : Կ. վարիչ Մարմնէն Մ. Գիւղերու հասցէները ուզեցի, բայց չտուին, եւ որովհետեւ չէի ուզեր զանոնք անգործութեան դատապարտել, լաւագոյն սեպեցի իրենց պարտադրել զաւառ զրկելու համար, այլապէս ուրիշ բան մը չէի կրնար ընել» :

ՏՕԺԹ. Պ. Պէննէ

3. — Եթէ մեր շրջաբերականները «ամիսներ մնալէ վերջը» զրկւած են Տաճկաստանի Մասնաճիւղերին, ստիպած պիտի լինինք եզրակացնելու, որ հէնց իրեն՝ նախորդ Վարիչ Մարմնի կողմից է եղել այդ զանցառութիւնը, քանի որ Ապրիլ 20 թւակիր մեր շրջաբերականը Մայիս 7-ից առաջ մեր ներկայացուցչի կողմից յանձնուել է իրան : Բայց ոչ, Տաճկաստանի Մասնաճիւղերն էլ իր ատենին ստացել են շրջաբերականները, ինչպէս պարզօրէն կտեսնուի հետեւեալ նամակներից. —

Նիսսար, 10 Մայիս, 1913

«Այս փօքրով ստացանք ձեր թիւ 10 շրջաբերականը, քէպէտ փափաքելի է մեզ՝ վառնա գումարելի յառաջիկայ Պատգամաւորական Ժողովին մէջ ուրոյն պատգամաւոր ունենալ Մասնաճիւղիս կողմէ, սակայն նիւթական անձկութեան պատճառաւ, մեր ձայնը ժա-

մանակին յարմար պատգամաւոր ընկերոջ մը պիտի տանք...»:

Ս. Գ. Հնչակեան Կուսակցութեան  
Նիսիաբի Մասնաճիւղ

Այնթապ, 21 Յունիս, 1913

«Ստացանք ձեր թիւ 10 քրջաքերականը: Թէեւ շատ փափաքելի էր մեզի ունենալ մեր մասնաւոր եւ ուրոյն ներկայացուցիչը, բայց մեր նիսիական խիստ անձուկ վիճակը բոլորովին չի ներեր ստոր: Ուստի, եթէ կարելի է, առանց նիսիական տեւէ ակնկալութեան նըշանակելի մէկը իբր մեր ներկայացուցիչը, պատրաստ ենք ընելու այդ, իսկ եթէ տեւէ կերպով անկարելի ըլլայ այդ, կը ցաւինք յայտնելու հիմակարէնէ թէ՛ պիտի չի կրնանք մասնակցել Ընդհ. Պատգ. Ժողովին, որուն որոշումները նւիրական պիտի ըլլան մեզի...»:

Ս. Գ. Հնչակեան Կուսակցութեան  
Այնթապի Մասնաճիւղ

Մայիս 28/10 Յունիս, 1913, Սերաստիւյ

«Ստացանք ձեր թիւ 10 շրջաքերականը, որ նկատողութեան առնուեցաւ անդամական Ընդհ. Ժողովի մէջ: Բոլոր ընկերները վափաք յայտնեցին եւ որոշում կայացուցին յատուկ պատգամաւոր ունենալ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին մէջ, ի գին ամեն գոհազութեան...»:

Ս. Գ. Հնչակեան Կուսակցութեան  
Սերաստիւյ Մասնաճիւղ

Վան, 22 Մայիս 1913

«... Կուսակցական մեր ներքին վիճակը նկատի ունենալով՝ այս տարի Ընդհանուր Պատգամաւորական Ժողով հրախրելը աւելորդ էր եւ աննպատակաշարմար, իսկ մեծամասնութիւն ունենալը շատ խոշոր հարցական մըն է արդէն...»:

Ս. Գ. Հնչակեան Կուսակցութեան  
Վանի Մասնաճիւղ

Իգմիր, 19 Յուլիս 1913

«... Նկատելով որ Պատգամաւորական Ժողովի համար որոշում տեղը պատերազմի տակ է, մենք պատգամաւոր չընտրեցինք կարծելով որ չպիտի ըլլայ, արդէն մեզմէ մէկը չըպիտի կարողանանք գրկել նիսիականի պատճառաւ եւ ձայն պիտի տանք...»:

Ս. Գ. Հնչակեան Կուսակցութեան  
Զմիւռնիոյ Մասնաճիւղ

4.— Շրջաքերականների անբաւական լինելու մասին նրանց կողմ



մից «պատկանեալ մարմնոյն» (Կեդրոնին) սեւէ գիմում չէ եղել: Արդէն հարկ էլ չկար: Տաճկաստան դրկւած 90 հատ շրջաբերականները աւելի քան բաւական էին այդ շրջանի 64 մասնաճիւղերի համար: Այդ լուրն էլ, ուրեմն, բացարձակապէս սխալ է եւ զիտումնաւոր:

Արդ՝ մեր այս պարզարանութիւններից յայտնուած է, որ Տաճկաստանի մասնաճիւղերը իր ժամանակին ստացել են շրջաբերականները, հետեւաբար բոլորն էլ տեղեկութիւն ունէին Յուլիս 25-ին Վառնայում գումարելիք է.—բդ Պատգ. Ժողովի մասին: Տեղեկութիւն ունէին ո՛չ թէ միայն Մասնաճիւղերը, այլ ե՛ւ անհատ րնկերները: Այդ առթիւ էլ ահաւասիկ մէկ փաստ.—

Կ. Պոլիս, 15/28 Մայիս 1913

«Դժբաղդաբար է.—բդ Ընդհ. Պատգ. Ժողովը անցեալ տարի չգումարուեցաւ, այս տարի այ Յուլիսի մէջ պիտի գումարուի, մինչդեռ հաւանական է որ մինչ Յունիսի վերջերը գաւառ մեկնելու տիպուիմ...»:

ԱՐԱՄ ԱԶԳՔՊԱՇԵԱՆԻ

Եթէ շրջաբերականները «ամիսներ մնալէ վերջը» յանձնւած լինէին, ընկ. Աչըքաչեանը Մայիսի մէջ ի՞նչպէս կարող էր իմանալ եւ յայտնել մեզ ժողովին ներկայ գտնելու իր անկարողութիւնը՝ պատու մեկնելու ստիպւած լինելուն պատճառաւ:

Այս դորաւոր փաստերը գալիս են ջախջախիչ կերպով հաստատելու, որ՝ ընկերներ Մուրատ եւ Զաքարեան ԴԻԴՄԱՄԲ մեղանշած են ճամարտութեան դէմ, կուսակցական կարգապահութեան դէմ, Հնչակեան գերագոյն շահերի դէմ:

Այժմ հարց է ծագում թէ՛ երբ Տաճկաստանի Մասնաճիւղերը, իր ժամանակին ստացել են Ժողովի հրաւիրագիրը, ինչո՞ւ 17 Մասնաճիւղեր միայն մասնակցել են Պատգ. Ժողովին, իրենց յատուկ պատգամաւորներով, կամ ձայներով, երբ նրանց թիւը 64 է (ի բաց առեալ 4 նորակազմ Մասնաճիւղերից), ըստ Տաճկաստանի կօնֆէրանսի վերջին շրջաբերականի:

Այդ հարցի պատասխանը որքան էլ նրիթական անձկութեան մէջ է բացատրուած, այնուամենայնիւ պատասխանատուութեան մեծ բաժինը ընկնում է լուծուած Վարիչ Մարմնի վրայ, որ փոխանակ իր մտահոգութեան գլխաւոր առարկան ներքին կազմակերպական գործը դարձնելու, փոխանակ Մասնաճիւղերի անյետաձգելի պահանջներին, խնդրանքներին զոհացում տալու, իր ամբողջ էներգիան

վասնել է Կեղբոնի գոյութիւնը ժխտող փաստեր հաւաքելու և այդ առթիւ հրատարակած իր շրջաբերականներով պատճառ է դարձել Մասնաճիւղերի քայքայման, բնկերների յուսահատութեան, լքումին, շարքերի նոսրանալուն, կաղմալուծման: Օսմ. պարլամենտական «ընտրութիւններին» մասնակցելու խնդրին մէջ մեծ եռանդ ցոյց աւոյց նախկին Վարիչ Մարմինը եթէ իր պարտականութեան գիտակից, իր կոչման բարձրութեան վրայ կանդնած մի մարմին լինէր և խղճի մտօք կատարէր իր պաշտօնը, Տաճկաստանի մեր կաղմակերպութիւնը այսօր չէր ներկայացնիլ այժմեայ ցաւալի դրութիւնը, մի գրութիւն, որ այնքան ցաւառուն կերպով պարզեցաւ, երբ անցեալ տարի, է.—րդ Պատգ. ժողովի հետ գրեթէ միամտմանակ, հրախրւած Տաճկաստանի Շրջանի Գ.—րդ Պատգ. ժողովը չը կայացաւ մեծամասնութեան շղոյթի վասն պատճառաւ: Արդարեւ 68 Մասնաճիւղերից միայն 21 ձայն էր ներկայացել: Արդեօք դարձեալ չըջարեալականներն էին պատճառը: Պէ՞տք է մտածենք, որ «Վարիչ Մարմին» ցանկութիւնն էր եղել, որ «մի միայն իր ուղած Մասնաճիւղերն ու բնկերները մասնակցեն» այդ ժողովին: Մենք մեզ թոյլ չենք տալ այդ անհեթեթութիւնը անելու:

Կեղբ. Վարչութեանս արիւիվի մէջ գտնուող բազմաթիւ աղազակող վաստերը ապացուցանում են, որ Տաճկաստանի մեր կարեւոր շրջանը, որին վերադասւած է փառաւոր դեր խաղալ Հայ ժողովուրդի ազատագրութեան մեծ գործի մէջ, մասնել է անարխիայի, կաղմալուծման՝ «Վարիչ Մարմին» անփարչադիտութեան, անբարեխղճութեան և մի միայն անձնական էնթէրէններ հետապնդելու, պարլամենտական աթոռներ ապահովելու զրաղած լինելու պատճառով:

Տաճկաստանի կենսունակ Մասնաճիւղերի բացարձակ մեծամասնութիւնը մասնակցել է է.—րդ Ընդհ. Պատգ. ժողովին: Ահա՛ այդ Մասնաճիւղերի անունները.—

ՎԱՆ, ԳԱՏԸԳԻՒՂ, ՊԱՅԸԱ, Մ ԱԶԻԶ, ԲԷՌՓԷ, ԳՈՒԼԷ ԳԻՒՂ, ՄԱՐԶԻԱՆ, ՍԵԲԱՍՏԻԱ, ԹՕԲԱՏ, ԶԻԼԷ, ՆԻՔՍԱՐ, ԿԵՍԱՐԻԱ, ԷՎԷՐԷԿ—ՖԷՆԷՍԷ, ՕՎԱՃԸՔ, ԻԶՄԻԹ, ԱՍԱԲԱԶԱՐ, ՊԱՐՏԻԶԱԿ:

Իզմիրի և Այնթապի Մ.ճիւղերի պատճառարանութիւնները լլսեցիք արդէն: Պէ՞տք է աւելացնենք, որ Կեղբ. Վարչութիւնը անհեռանք էր թողել Այնթապի Մասնաճիւղի խնդրանքը՝ պատգամաւորների բնարութեան գործին մէջ սեւէ ձեւով չի միջամտելու մըտահոյութեամբ:

Իսկ Արքուիայի, Մէնքէշի, Քարակէօլի և Պանորբայի նորա-

կազմ Մ.Տիդերը, ըստ կազմական կանոնադրի 10-րդ յօդուածի ար-  
բամադրութեան, իրաւունք չունէին Ընդհ. Պատգ. ժողովին մաս-  
նակցելու:

Կուսակցութիւնս, ուրեմն, է. րդ Պատգ. ժողովին մասնակցե-  
լու իրաւունք ունեցող Մ.Տիդեր ունէր հետեւեալ վայրերում.—

Տաճկաստանում՝	64	Մասնաճիւղ
Ամերիկայում՝	30	Մասնաճիւղ
Կովկասում՝	4	Մասնաճիւղ
Պարսկաստանում՝	1	Մասնաճիւղ
Եգիպտոսում՝	2	Մասնաճիւղ
Ռումանիայում՝	5	Մասնաճիւղ
Պուլկարիայում՝	4	Մասնաճիւղ

Ընդամէնը՝ 110 Մասնաճիւղ

Մեծամասնութիւն կազմելու համար անհրաժեշտ էր 56 Մասնա-  
ճիւղ: Ներկայացել են՝ Ամերիկան, Պուլկարիան, Ռումանիան եւ  
Եգիպտոսը ամբողջութեամբ, այսինքն 41 Մասնաճիւղ

Տաճկաստանից՝ 17 Մասնաճիւղ

Ընդամէնը՝ 58 Մասնաճիւղ

Որք օրինաւոր մեծամասնութիւն է, ընդունելով նոյն իսկ Տաճ-  
կաստանի Շրջանի համար լուծուած վարիչ Մարմնի ներկայացուցած  
64 թիւը, որք ցաւ է մեզ յայտնել, իրականութեան մէջ գոյութիւն  
չունի իսկապէս:

Մեր ասածներին որպէս հաստատութիւն, ստորեւ գետեղում ենք  
Կեդր. վարչութեան ստացած նամակներից մի քանի մէջըբերումներ,  
որոնք շատ յստակօրէն պարզում են ձեզ այն վերին աստիճանի ար-  
խուր վիճակը, որին մատնել են Տաճկաստանի Մասնաճիւղերից  
շատ շատերը:

Պարտիզակ, 23 Գեկտ. /5 Յունվ. 1913

«Նիկոմիդիայ քաջանի Ս. Գ. Հնչակեան կուսակցութեան մաս-  
նաճիւղերու կողմէն ընտրուած տաղամարմինքս նկատի ունենալով  
Պոլսոյ Կեդր. վարիչ Մարմնի անդամալուծուած վիճակը, Պարտի-  
զակի մէջ Գեկտ. 23-ի ցորեկին ժամը 1-ին (ը.ե.) ժողով գումարելով  
մինչեւ գիշերուան ժամը 1½ (ը.ե.) երկար խորհրդակցութիւններէ  
և բեր ու դէմ վիճաբանութիւններէ վերջ որոշեց՝

«Ներքակ շրջաբերականի համաձայն վարիչ Մարմինը լուծ-

ուած նկատել եւ խնդրել ձեզմէ որ մեր ընտրած առժամանակեայ վարիչ Մարմինը վաւերացնելով հեռագրու իմացնել ուր որ պէտք է եւ ձեռնարկել ըէֆէրանդումի օրէնքով ընտրել մնայուն վարիչ մարմին մը, որ կարեւայ անյետաձգելի եւ կենսական շատ մը դիզուած խնդիրները լուծել եւ օգտակար լինել Տանկաստանի բոլոր մասնահիւղերուն, որոնք պէտք ունին բարգաւաճելու...»:

Ս. Գ. ՀՆԶԱԿԵԱՒ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԵԱՆ

Իզմիտի, Ատա-Պագարի, Պարտիզակի, Օվաճըզի  
Արսլանպէրի, Տէօնկէլի, Գընըրլարի եւ  
Գուրուպէլէնի Մասնահիւղեր

Դերջան-Փլըրիզ, 1 Մայիս 1913

«...Գաւառս իր մի քանի մասնահիւղերով եւ խմբերով այժմ գրքերէ բայքայման եւ կազմալուծման ենթարկուած է (ի բաց առեալ մեր եւ Դվնիկի Մասնահիւղէն), որուն պատճառը բնականաբար պարզ է քէ՛ր շրջիկ պրօպականդիստ չի կայ գաւառիս մէջ. սրու մասին քանիցս Պոլիս վարիչ Մարմինն զրած եւ մանրամասնութիւններ պարզած ենք անհրաժեշտաբար շեշտելով կարող շրջիկի մը առաջումը, որու պատասխանը կը լինի «կարեւորը կը կարգադրենք» բանաձեւը, ինչ որ էր կառավարութեան բանաձեւը իրեն հզամ ամէն կարգի դիմումներու նկատմամբ...»:

Ս. Գ. ՀՆԶԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԵԱՆ  
ՓԻՐԻՉԻ ՄԱՍՆԱՃՅԻՂ

Տիգրանակերտ, 6 Յուլիս 1913

«...Պէտք է գիտնաք, որ տեղս ո՛չ Մասնահիւղ կայ, ո՛չ ալ կազմակերպութիւն, այդ առթիւ հինգ օրինակ միայն «Հնչակ»ով կը բուականանաք»:

ՍԵՂԻՐԱԿ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Եւ Տիգրանակերտը մեր ամենաուժեղ Մասնահիւղերից մէկն էր 2000 է աւելի անդամներով:

Փաստերը այնքան պերճախօս են, որ մեր կողմից աւելորդ ենք համարում մատնանշելը թէ՛ որո՞նք են ստեղծուած այս կազուիթեան պատասխանատուները: Սօսքը տալիս ենք զարձեալ Տանկաստանի Մասնահիւղերին եւ վարիչ Մարմնի լիազօր ներկայացուցչին, որպէս զի սեւէ տարրեր աէնդէնցիս չի վերադարձ մեզ:

28 Մարտի 1913 թ. վան  
 «... Էս ամեն շարք Տանկաստանի վարիչին մանրամասն եւ ընդարձակ տեղեկութիւններ եմ տւել, որի դիմաց երբեմն ստացել եմ կցկտուր վայր ի վերայ «բարեւագրեր»։ Եւ գարնանալին այն է, ինձ գրել են «Նամակ չես գրում», սակայն բոլոր նամակներինցս էլ ցիտատներ են տուել։ Խուսափողականութիւն է եղել նրանց այդ արարքը։ Այսպէս վարուելով շատ վնաս են տուել տեղիս գործին, մանաւանդ մեր յուրջ բողոքները, որ պիտի ներկայացուէին պատշաճութեամբ իշխանութեան, բոլորն էլ մնացին միայն հազարդագրութիւն։ Մրանով ես իմ բողոքս եմ յայտնում ձեզ, նրանց գործունէութեանս եղանակի եւ ընթացքի մասին, մանաւանդ եթէ ինձ հետ այդպէս են վարում, ապա ի՞նչ կը լինի միւս մասնակիւղերի հետ։ Զեր աւնեցած իրաւասութեան հիման վրայ, այս անել կացութեան առաջը առնելու էք...»։

Ս. Դ. ՀՆԶ. ԿՈՒՍ. ՏԱՃԿ. ՎԱՐԻՉ ՄԱՐՄՆԻ  
 ԼԻԱԶՕՐ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉ  
 ՓԱՐԱՄԱԶ



Մամուրէք-Իւլ-Ազիզ. 17 Յունիւլ. 1914

«Էւրոպէական Պատգ. Ժողովի որոշումները ստացանք, խիստ գոհ մնացիմք նոր ուղղութեանէն։ Մ. Ազիզի շրջանի 12 Մասնակիւղերէն 4-5-ը միայն կանգուն են, մնացեալը քայքայուած է շնորհիւ Տանկաստանի վարիչ Մարմնի...»։

Ս. Դ. ՀՆԶԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
 Մ. ԱԶԻԶԻ ՄԱՍՆԱՃԻԻՉ



Կեդր. վարչութիւնը անհետեւանք էր թողել եւ Նիկոմիդիոյ Երջանային Պատգ. Ժողովի առաջարկը, ներքին համերաշխութեան կապերը աւելի չը լարելու գզուշութեամբ։

1912 Օգոստոսին Պոլիս դումարած Տանկաստանի Բ. Պատգ. Ժողովը բւարկած էր հետեւեալ բանաձեւը.—  
 Կեդր. վարչութիւնը եւ Կ. Վ. Մարմնի Հաշիւները.—

Կեդր. վարչութիւնը իր իրաւունքը գործադրելով՝ վեց ամիսը անգամ մը ուղղակի կամ ուրիշ մարմնի մը միջոցաւ պէտք է քննէ Կ. Վարիչ Մարմնի հաշիւները եւ Կ. Վ. Մարմնի միջոցաւ արդիւնքը հազարդէ Մասնակիւղերուն։

Զ. — րդ Ընդհ. Պատգ. Ժողովն էլ արդէն տւել էր իրաւունք, որ

Կեղրոնը հսկէ Տաճկաստանի Վարիչ Մարմինների գործունէութեանը եւ նրանց նիւթական հաշիւների վրայ: Տաճկաստանի Պատգ. Ժողովը, սերմն, գալիս էր իր կողմից յիշեցնելու Կեղր. Վարչութեան, որ նա իր իրաւունքը գործադրելով վեց ամիսը մի անգամ քննէր Վարիչ Մարմնի հաշիւները: Մեր ստացած վերոյիշեալ բողոք նամակները, ինչպէս նաև ւ՛յն հանգամանքը, որ «Նոր-Աշխարհ»ը գաղթեցւած եւ մեքենաներն ու տաները պարտապահանջներ ի կողմից գրուել էին (որովհետև չէր գտնուել մի հողի որ հինգ ոսկիի գոհոյութեամբ այդ արժէքաւոր գոյքերը մի ապահով վայր փոխադրէր), այս բոլոր դէպքերը ասում ենք, անհրաժեշտ էին դարձնում Վարիչ Մարմնի նիւթական եւ բարոյական հաշիւների անմիջական քննութիւնը եւ յանցաւորների պատասխանատուութեան ենթարկելը: Հետեւաբար այդպիսի մի հրահանգ տւել էինք Տաճկաստանի մեր ներկայացուցիչ ընկ. Տօքթ. Պէննէին, որը քանիցս պահանջում է հաշիւ, բայց Վարիչ Մարմինը խոյս կուտայ, առարկելով թէ՛ իրենց երբորդ պաշտօնակիցը (ընկ. Մուրատ) իր անձնական գործերով Մէրսին է գնացել եւ մինչև նրա Պօլիս վերադարձը անկարող է սեւէ հաշիւ տալ: Այս ձգձգման քաղաքականութիւնը տեսում է մինչև ւ՛յն ասեմէն երբ արդէն կը գումարուի է.—րդ Պատգ. Ժողովը, որի սեղանը՝ վրայ կուգայ այս կենսական խնդիրն էլ եւ կ'ստանայ իր յայտնի լուծումը, որի մասին կարողացիք արդէն ձեզ գրուած ժողովի Արտումների մէջ:

Զեզ հասկնալի կը լինի այլևս թէ՛ ինչի՞ց դրդւած նախորդ Վարիչ Մարմինը աշխատում է «ապօրինութիւններ» գտնել է.—րդ Պատգ. Ժողովի շրջաբերականները ցրելու եղանակին մէջ: Սա շարունակութիւնն է երկու տարուց ի վեր հետեւած իր տխուր քաղաքականութեան, մի քաղաքականութիւն, որ ազդատուր եղաւ Տաճկաստանի Շրջանի համար՝ «Նոր-Աշխարհ»ի խափանմամբ եւ Մանախիզերի քայքայմամբ, կ'սպառնայ ազդատուր լինել եւ մեւ Արտասահմանեան Կազմակերպութիւնների համար՝ կասկած ներշնչելով դէպի իրանց գերագոյն Մարմինները եւ սերմանելով նրանց մէջ անկարգապահութեան սրտմներ:

Արդարեւ, նախորդ Վարիչ Մարմնի Կեղրոնական Վարչութեան հանդէպ բռնած թշնամական վարմունքը աւելի քան ակներեւ է եւ տուելի լայն չափեր է ստացել ւ՛յն օրից մանաւանդ, երբ Կեղր. Վարչութեան անդամները հեռացել են Կ. Պօլսից: Մինչ Տաճկաստանի Բ. Պատգ. Ժողովը երբեք իրան թոյլ չէր տւել, եւ չէր էլ կարող տալ,

Կեղրոնի օրինաւորութեան կամ ապօրինութեան խօսք բարձրացնել, եւ իր մի կարգ որոշումների մասին դիմում էր Կեղր. Վարչութեան վաւերացումին, նրանից բխած Վարիչ Մարմինը «ապօրինութեան» չարց է բարձրացնում նոյն իսկ ինքն իրան հակասելով:

Ահաւաստիկ այդ մասին էլ մի կարկառուն փաստ.—

Նախորդ Վարիչ Մարմինը Կեղր. Վարչութեան անդամների Կ. Պօլիս գտնւած միջոցին հետեւեալ նամակն էր ուղղել նրան, որ նոյնութեամբ առաջ ենք բերում.—

Կ. Պոլիս, 10/23 Սեպտեմբեր 1913  
Սօցիալ-Դեմօկրատ Հնչակեան Կուսակցութեան  
Կեդրոնական Վարչութեան

Ընկերներ,

Ձեզ կը ներկայացնեմ Կուսակցութեան Տանկաստանի Բ. Ընդ-  
հանուր Պատգ. Ժողովի որոշումները, որոնցմէ է. Ընդհ. Պատգ. Ժո-  
ղովի յետաձգման եւ Հմայեալ Արամեանցի չէզոքացման ու ար-  
տօժուման խնդիրներու մասին տրուած որոշումը, համաձայն Ժողո-  
վի ցանկութեան, ձեր հաւանութեանը կենսարկեմ:

Ըներական բարեւեքով՝

Ի Դիմաց Ս. Գ. Հնչակեան Կուս. Տանկ. Կեղր. Վարիչ Մարմնի	
Ատեմաղպիք	Ատեմաղպետ
Ն. ԶԱՔԱՐԵԱՆ	ՄՈՒՐԱՏ

Իսկ այդ թւից մի ամիս յետոյ, այսինքն 1912 Հոկտ. 12/25-ին, էրբ ընկ. Բ. Վարազդատ արդէն Եւրոպա էր մեկնել, որպէսզի ընկ. Ա. Նազարբէկը Կեղրոն հրաւիրելով ձեռնարկի «Հնչակ»ի հրատա-  
րութեան եւ ընկ. Սապահ-Գիւլեանն էլ Փոքր Հայք անցել, Վարիչ Մարմնի իսկ հաւանութեամբ, հրատարակում են թիւ 2 Շրջաբերա-  
կանը, որի մէջ ասում է.—

«Ինչպէս կը տեսնէք Կեղրոնի կազմը ապօրինի է եւ զայն  
կազմող ընկերներն ալ իրարմէ ահադին հեռաւորութեան  
վրայ ու իրարմէ անտեղեակ կը դորձնեն...»:

Առաջին անգամը չէր, որ Կեղր. Վարչութիւնների, ինչպէս  
նաեւ Վարիչ Մարմինների անդամները կուսակցական կարեւոր գոր-  
ծերով մեկնում էին «իրարմէ ահադին հեռաւորութեան վրայ» գրտ-  
նող վայրեր, բայց ո՛չ մի բարեխիղճ մարմին, ցարդ թոյլ չէր տւել  
իրան ընկերների միտքերը պղտորելու ընոյթը ունեցող այդպիսի  
նախադասութիւններ շարադրել, քանի որ պարզ էր ամենքին, որ

Կրթ Կեղրոնների անդամները համեմատաբար շատ աւելի հանգստա-  
յէտ կեղրոնավայրը ձգելով դաւառ են մեկնում, նշանակում է թէ՛  
նրանք կուսակցական գերազոյն շահը գերազատում են իրենց հան-  
գատութիւնից:

Այդ օրերին ծագում է թրքո-պալքանեան պատերազմը, Եւրո-  
պական դիւանադիտական սեղանի վրայ է դալիս ե՛ւ Հայկական Հար-  
ցը: Եւ ի՞նչ կը լինէր Կուսակցութեանս վիճակը՝ եթէ նախորդ Վ.  
Մարմինը յաջողած լինէր Կեղրոնի կազմը «ապօրինի» հռչակելով՝  
նրան վարկարեկելու եւ սննչացնելու իր մթին ծրարքի մէջ, որով եւ  
Կուսակցութիւնը շունենար Եւրոպայի մէջ մի հաստատութիւն, որ  
Հայկական Հարցի այդ ամենահրատապ ժամանակին շկարողանար  
արտայայտել «Հնչակ»ով եւ յայտնի «Կոչ»ով: Մենք թողնում ենք,  
որ իւրաքանչիւր անկեղծ բնկեր տայ այս մասին իր անվերապահ վը-  
ճիւր:

Կեղր. Վարչութիւնը բժրոններու ըրպէի լըջութիւնը, այդ ժա-  
մանակից մինչեւ այսօր լույ էր՝ անպատասխանի թողնելով նախորդ  
Վ. Մարմնի այդ եւ նոյնանման շրջաբերականները:

Կեղրոնը լուեց, որովհետեւ նրա խորին համոզումն էր, որ այդ-  
պիսի ջլատիչ պայքարներն ու բամբասանքները կարող էին կտրել  
բնկերների մէջ վոխադարձ ստահութեան եւ սիրոյ խոյանքը, քան-  
զեւ ներքին համերաշխութեան կապերը, հետեւաբար պէտաւոր հե-  
տեւանքներ միայն արտադրել ի մնաս Հայկական Մեծ Դատին եւ նը-  
րա անկեղծ պաշտպան Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան: Կեղրոնը  
համոզւած էր, եւ ամէն ճշմարիտ ու անկեղծ Հնչակեան պէտք է հա-  
մոզւած լինի, որ միեւնոյն նպատակին նւիրւած մի կուսակցութեան  
մէջ շարունակուող եւ քրօնիկական հանգամանք ստանալ սպառնացող  
ներքին այս կոիւնները կտաջացնեն ոչ միայն մեր վերոյիշած պէտ-  
ները, այլե՛ւ արզելք կը դառնան, ինչպէս դարձել են անցեալում,  
պզնացմանը եւ ծաւալմանը մեր բնդգրկած ա՛յն վսե՛մ գաղտնա-  
բին, որ ամէն արհաւիրքների, խոչնդոտների բովից յաղթականօրէն  
անցնելով՝ կը տեւէ եւ ու այսօր, առաւել քան երբէ՛ք, պէտք է տը-  
րապետէ ամենուրեք:

Այս համոզումներով էր որ Կեղրոնը ցանկացել էր իր լուսթեամբ  
թաղւած տեսնել ա՛յն բոլոր քինախնդրութիւնները, ա՛յն բոլոր ատե-  
լութիւնները, որ մի ժամանակից ի վեր սկսել էին նոր աւերներ գոր-  
ծել մեր շարքերում, եւ մեր տրամադրելի բոլո՛ր ոյժերը բերել, հա-  
մախմբել մեր ազգային գոյութեան, մեր ցեղի պահպանման գերա-



դոյն մաքառումի շուրջը: Կեղրոնի յեղափոխական գիտակցութիւնը, նրա պարտականութիւնը եւ ստանձնած պատասխանատու պաշտօնը թեւադրում էին իրան այդպէս մտածել եւ այդպէս էլ գործել: Բայց տեսնում ենք որ, Կեղրոնի այդ կօրրէկտ\* ընթացքը բացատրել է տկարութեամբ եւ առիթ է աւել նախորդ Վարիչ Մարմնին աւելի եւս յառաջանալու իր սխալ եւ կործանարար ուղիի մէջ:

Ամենքիդ յայտնի է, ընկերենէ՛ր, որ 1913 Ապրիլ 20-ին, երբ Կեղրոնական Վարչութիւնը բաց թողեց իր թիւ 10 շրջաբերականը, որով էրկրորդ անգամ լինելով հրատարակում էր է.—րդ Ընդհ. Պատգ. Ժողով Վառնայի մէջ, նոյն տարւայ Յուլիսի 12/25-ին, ո՛չ ոքի մտքից չէր կարող անցնիլ, որ Պալքանեան դաշնակից պետութիւնների մէջ այնքան շուտ պիտի ծագէին գժտութիւններ, որոնք վերջանային աղէտալի երկրորդ մի պատերազմով եւ ջախջախած թիւրքիան, առիթից օգտւելով, պիտի վերապրուէր Ազրբայճանուպօլիսը եւ թշնամութիւնները՝ Թիւրքիայի եւ Պուլկարիայի միջեւ՝ պիտի տեւէին մինչեւ Օդոստոս, Սեպտեմբեր ամիսները, եւ այդպիսով Վառնա քաղաքը պիտի դառնար բոլորովին մի անյարմար վայր Պատգ. Ժողով զումարելու: Միւս կողմից՝ Կեղր. Վարչութիւնը իր թիւ 10 Շրջաբերականի մէջ է.—րդ Պատգ. Ժողովի զումարումը բացարձակ անհրաժեշտութիւն համարելով՝ կատեղօրիկ կերպով յայտարարել էր այսպէս՝

Ի նկատի ունենալով Թիւրքիայում ստեղծուած նոր պարագաները, — պարագանե՛ր, որ ծանր պարտականութեան տակ են դնում կուսակցութիւնս, կրամայական անհրաժեշտութիւն է, որ ո՛չ միայն Մասնահիւղերը իրենց յատուկ պատգամաւորները ուզարկեն, այլեւ պատգամաւոր ընտրեն այնպիսի ընկերներ, որոնք պատմական րոպէի փափկութիւնը ըմբռնելու եւ պահանջուած բարձրութեան վրայ կանգնելու յատկութիւններով օժտուած լինեն:

Կեղր. Վարչութիւնը հետեւեալ ազդու եւ անվերապահ վերջաբանով նախազգուշացնում էր Մասնահիւղերին Ժողովի կրկին չք զումարելու պարագային յառաջանալիք ահաւոր փտանդների դէմ.—

Լիայոյս ենք, ընկերներ, որ կանապարէ՛ք ձեր կուսակցական պարտականութիւնը կատարել, նախապէս աչքի առաջ ունենալով, որ ներկայ Կեղրոնական Վարչութիւնը այլեւս կուսակցական ո՛չ մի պարտականութեամբ պարտաւորուած պիտի լինի իր պատօնը շա-

\* Ուղիղ

յունակել, — ուրեմն կ'ստեղծուի մի շատ ոչ-ցանկալի դրուքիւն, երբէ այս անգամ էլ Ընդհանուր Պատգամաւորական ժողովը որ եւ է պատճառով չկայանայ :

Սպասելի էր, ուրեմն, որ կուսակցութեանս գոյութեամբ մտահոգւող բոլոր Մարմիններն ու ընկերները, ամէն զոհողութիւն յանձն առնելով, փութացնէին ո՛չ միայն իրանց «յատուկ պատգամաւորը, այլեւ պատգամաւոր ընտրէին ա՛յնպիսի ընկերներ, որոնք կարող լինէին «ըմբռնելու բոպէի փափկութիւնը» : Սպասելի էր նաեւ որ է.—բո Պատգ. Ժողովին ներկայ գտնուելու համար Տաճկաստանից զալիք պատգամաւորները Կ. Պոլիս հասած լինէին Յուլիսի առաջին կէսին, և Վառնա՝ Յուլիսի վերջին, ԱՄԵՆԱՌԻՇԸ : Կեղբոնի կողմից ընկեր Ս. Սապազ—Գիւլեանը Վառնայում սպասեց մինչև Յուլիս 31 ը՛հ հասնելիք պատգամաւորները դիմաւորելու համար : Դժբաղդարար ոչ մէկ պատգամաւոր եկել էր : Պոլիս հասել էին միայն ընկերներ Յ. Բայուցեան և Ս. Վահագն Տաճկաստանի ութ Մասնաճիւղերի կողմից : Ամերիկայի շրջանը, իր Պատգ. Ժողովի որոշումով, արդէն իր ձայնը տւել էր այն գործիչին, որին որ Կեղբոնը ուղարկելու լինէր Ամերիկա : Պուլկարիան, Ռումանիան և Երիզտոսը պատրաստ էին : Կովկասից կասկածելի էր, որ պատգամաւորներ գային, բանի որ այդ Շրջանի Մասնաճիւղերից երեքը քայքայուել և մէկն էլ նոյն թւականներին կառավարական հայրամանքներին ենթարկւելով՝ ընկերները բանտարկուել էին և հաղորդակցութիւնը դադարել էր : Պարսկաստանից սպասում էինք միայն Էնզելիի Մասնաճիւղից պատգամաւոր : Միւս Մասնաճիւղերը կաղձալուծւած էին :

Մինչ կուսակցական դրութիւնը այսպէս էր պատկերանում, քաղաքական կացութիւնը ևս աւելի անորոշ էր դառնում և Պուլկարիոյ մէջ երթեւեկութիւնը բոլորովին անհնարին լինում Ռումանական բանակի Սօֆիայի վրայ արշաւելուն պատճառով : Պարզ էր, որ սղեռք էր գտնել Վառնայից աւելի յարմար մի վայր, որ միեւնոյն ժամանակ Պոլսին մօտիկ լինէր՝ դիւրութիւն տալու համար Տաճկաստանի Մասնաճիւղերի պատգամաւորներին : Եւ Կեղբոնը գտել էր այդ յարմար վայրը Քէօսթէնճէն, շնորհիւ Ռումանական կառավարութեան թոյլտուութեան : Արդէն Օդոստոսի մէջ էինք : Միթէ՞ կարելի էր, և կամ կա՞ր ժամանակ մի նոր շրջաբերականով յայտնելու բոլոր Մասնաճիւղերին թէ՛ ժողովը փոխանակ Վառնայի՝ կայանալու է Քէօսթէնճէում : Այդ շրջաբերականները ի՞նչ օգուտ պիտի տային, երբ Յուլիսի 25-ին պիտի դումարուէր Պատգ. Ժողովը և

պատգամաւոր զրկելու կարող եւ փափաքող եղող Մասնաճիւղերը ԱՐԳԷՆ, ԱՐԿԱՅՈՒՄ ՊԷՏԲ Է ԱԻՆԷԼԻՆ, իրենց պատգամաւորները: Հետեւաբար, ո՛րեւէ քննադատութեան չէ կարող դիմանալ նախորդ Վարիչ Մարմնի այն առարկութիւնը թէ՛ «Կեդր. Վարչութիւնն ալ նոր շըրջաբերականով մը չեաղոյութեց քէ ժողովը պիտի կայանայ... քաղաքին մէջ», խոստովանելով հանդերձ որ «ի վերջոյ քաղաքական պարագաները արգելիք եղան նոյն ժողովին վառնայի մէջ գումարելուն»: Ենթադրենք սլահ մի թէ՛ քաղաքական պարագաները արգելիք չը լինէին եւ ժողովի վայրը մնար Վառնա քաղաքը, արդեօ՞ք աւելի մեծ թւով պատգամաւորներ պիտի գային Տաճկաստանից: Եթէ այո՛, ինչո՞ւ չեկան Պօլիս հրաւիրած Շըջանային Գ.—րդ Պատգ. ժողովին, որը երկար օրեր սլխակուց յուսահատած կօնֆէրանսով վերջացաւ:

«Ինչպէս յետոյ իմացանք ժողովին նոր նշանակելիք տեղն ու ժամանակը Իզմիր, Գատը-Գիւղ եւ ուրիշ՝ իրենց համակիր եղող 1-2 բնիկներու գրած ու ժողովին տեղը հաղորդած, նոյն իսկ հետագրով», աւուր մէջ նոյն թիւ 7 շըջափերականի մէջ:

Ժողովին նոր նշանակած տեղն ու ժամանակը մեր Կ. Պօլսի ներկայացուցչի միջոցով յայտնել է Տաճկաստանի Գ. Պատգ. ժողովին, ինչպէս է՛ւ է.—րդ Պատգ. ժողովի համար Պօլիս եկած բոլոր պատգամաւորներին: Ընկեր Վանիկին առանձինն պաշտօնապէս յայտարարել է, որ նոր գալիք պատգամաւորներին էլ յայտնէ: Ուրեմն ոչ ոքից «գաղտնի» կամ «իրենց համակիր եղող» ի խօսք չէր կարող լինել: Ապացոյց մեր ասածին ա՛յն, որ Տաճկաստանի կօնֆէրանսին ներայ եղող պատգամաւորներից բնկ. բնկ. Պ. Պօղոսեան (Պափրա), Կ. Փաթթուկեան (Իզմիր. Ատարազար. Պարտիզակ), Ս. Վահագն (Բեօրսիէ, Խուլէ, Մ. Ազիզ), անձամբ եկել էին Քէօսթէնճէ է.—րդ Պատգ. ժողովին, իսկ Յ. Բալուցեան (Մարգուան, Սեբաստիա, Երզնկիա, Նիքսար, Զիլէ) եւ Օհան Եղիազարեան (Կեսարիա եւ Էվէրէն-Ֆէնէտէ) իրենց ձայները փոխանցելով մեկնել էին, որովհետեւ իրենց ժամանակը եւ նիւթական պայմանները չէին ներած աւելի ուշանալու, քանի որ Տաճկաստանի ժողովի համար Ենթադրածից աւելի էին սպասել: Գատը-Գիւղը նոյնպէս իր ձայնն է տւել Վանի պատգամաւոր՝ բնկ. Տօթթ. Պէննէին:

Կեդրոնի կողմից, նոյն իսկ հեռագիրներով, ամէն ճիշդ թափուելը ապացոյց չէ՞, որ նա իր բոլոր պարտականութիւնը կատարել է է.—րդ Պատգ. ժողովի գումարումը յաջողեցնելու համար, իսկ «օրինաւորութիւնից», «ապօրինութիւնից» խօսել սիրողները, որոնք,



իրբ թէ, կուսակցութեան գործերի վրայ զողացողներ են, ինչո՞ւ չեկան, կամ ինչո՞ւ իրենք էլ իրենց կողմից միջոցներ ձեռք չառան, գոնէ մի պատ կարտով չի յայտնեցին «այն կարգ մը Մասնաճիւղերին», «որոնք չըջարե՞րական ստացած չեն» եղել, «Թիւով անբաւական լինելուն համար»: Քէօսթէնճէն Կ. Պօլսից նոյնքան հետու էր, որքան վառնան, այսինքն միայն 12 ժամ նաւով: Եւ զարմանում ենք, որ այդ թիւ 7 չըջարե՞րականի տակ ստորագրողներից մին՝ ընկ. Մուրատը է.—րդ Պատգ. Ժողովից իր անտեղեակ լինելը «փաստել» է փորձում, երբ ինքը, նախորդ Կեդր. Վարչութեան կողմից թիւ 335 և 4 Օղոստոս 1912 թւակիր պաշտօնադրով ստանձին հրաւէր էր բւտացել ներկայ գտնւելու: Զարմանում ենք նաև, որ «մենք այդ ժողովին գումարումը միայն այն երջարե՞րականներէն տեղեկացանք՝ զանդատուող մի մարմին, Տաճկաստանի Գ. Պատգ. Ժողովի համար բաց թողած չըջարե՞րականից մի օրինակ անգամ չէ ուղարկել Կեդրոն որը պէտք էր իր ներկայացուցիչը ունենար այդ ժողովում: Յիշեցնում ենք նաև, որ Ընդհ. Պատգ. Ժողովներին մասնակցելու իրատունք տրուած է միայն «Թիւրքիայից դուրս գտնուող Գործադիր Բանձնախմբերին», (Տես Կազմական Կանոնադիր յօդ. 15 ծանօթ. Գ.):\*:

«Այդ ժողովը, ի միջի այլոց, որոշե՞ր է Տաճկաստանի Ս. Գ. Հնչակեան կազմակերպութեան ինքնավարութիւնը ջնջել, Կեդր. Վ. Լարմինը լուծել» ասւում է նոյն չըջարե՞րականի 2-րդ էջում, իսկ չի՞չ աւելի վարը կարդում ենք.— «Այդ ժողովը ցրելէն վերջը հակառակ ամիս մը անցած ըլլալուն, դեռ որոշումները հազարդուած չեն»: Շատ լաւ, երբ դեռ որոշումները հազարդուած չէին, ի՞նչ փաստով այդ ժողովը Տաճկաստանի «ինքնավարութիւնը ջնջել է» պրօֆօկացիան արւում է: Աւելի խոհեմութիւն չէ՞ր լինիլ սպասել եւ տեսնել թէ՛ կա՞յ արդեօք մի այդպիսի որոշում: Իր գործած յանցանքի համար Վարիչ Մարմինը պատասխանատուութեան ենթարկելը միթէ՞նչ նշանակում է «ինքնավարութիւնը ջնջել»: Մենք ամօթ ենք զդժուած՝ Հնչակեան անունը կրող մի մարմնի կողմից ակնյայտնի կերպով գործւած այդ պրօֆօկօտարական արարքը, այդ ահաւոր հա-

\* Ծանօթ հրատարակչի.— Տաճկաստանի Ս. Գ. Հնչ. կանոնագիրը Հնչակեան կուսակցութեան թշնամի հայ պահպանողականների ձեռքն անցած ըլլալով՝ պահած են եւ ի պէտքին գործածած մասնիչական գործի մէջ:

կասութիւնները արձանագրելիս: Իր կոչման բարձրութիւնը բժրոնող, ուղղամիտ եւ պարտաճանաչ մի մարմին մի՞թէ պիտի առաջնորդէր «կիմանանք քէ», «Եկող ընկերներէ տեղեկացանք քէ» ի նման անիմաստ եւ առաձգական նախադասութիւններով ու իր քինախնդրութիւններին յարուրդ տալու համար ստանձնէր Կուսակցութեան Գերագոյն Հաստատութեան քանդումի տխուր դերը:

«Երբ այս իրադարձութիւններուն տեղեկ եղանք, մենք իսկոյն խորհրդակցական ժողով մը կազմեցինք մասնակցութեամբ Պոլսոյ Մասնաճիւղներու գիտակից եւ փորձառու ընկերներուն եւ ուսանողներուն եւ իրողութիւններն հաղորդելով՝ անոնց կարծիքն ուզեցինք» գրում է թիւ 7 շրջաբերականի 3-րդ էջում: Եւ որովհետեւ յիշեալ «խորհրդակցական ժողովն» էլ ասել է թէ՛ «դոյքերը չի յանձնէք», ուրեմն ինչիբը համարում է փակած:

Չգիտենք Կազմական Կանոնագրի ո՞ր յօդածի հիման վրայ Պոլսոյ մէջ գտնուող մի քանի «գիտակից եւ փորձառու» ընկերներից եւ ուսանողներից կազմած «խորհրդակցական» պատահակա ն մի ժողով իրաւունք է ունենում վէթօ անելու Հնչակեան սեւէ մի մարմնի սեւէ մի որոշումը: Սա նախորդ Վարիչ Մարմնի կողմից յանցանքի ծանրութիւնը մի ուրիշի վրայ ձգելու ունայն փորձ է, ուրիշ ոչինչ: Ս. Գ. Հնչակեան Կուսակցութեան Գերագոյն Մարմինը Ընդհանուր Պատգամաւորական ժողովն է, իսկ նրա բացակայութեանը՝ Կեդրոնական Վարչութիւնը: Այսպէս է տրամադրում Հնչակեան Կազմական Կանոնագիրը: Ո՛չ մի «խորհրդակցական ժողով», հոգ չէ թէ՛ որքան «փորձառու եւ գիտակից» ընկերներից կազմած լինի, իրաւունք չունի, եւ չի էլ կարող ունենալ, վէթօ անելու Հնչակեան բարձրագոյն Հաստատութիւնների որոշումները: Հնչակեան դրօշին ներքեւ դորձել ջանկացող բոլոր ընկերները, գիտակից թէ՛ ոչ, պարտաւոր են խոնարհուել Գերագոյն Մարմնի որոշումների առաջ, նոյնիսկ եթէ այդ Մարմնի մէջ, որպէս պատգամաւորներ, գտնուած լինեն ոչ գիտակից ընկերներ էլ: Բաւական է որ մի ընկեր կատարած լինի Հնչակեանի իր բոլոր՝ պարտականութիւնները, նա մեզ համար նոյնքան սիրելի է, որքան մի այլ ընկեր, որ նրանից աւելի զարգացած է: Եւ դեռ մեզ համար հարցական է ակնարկած «խորհրդակցական ժողով»ի մասնակցող ընկերների «գիտակից եւ փորձառու» լինելու հանդամանքը: Եթէ նրանք իսկապէս օժտուած լինէին այդպիսի յատկութիւններով՝ չպիտի թոյլ տային իրենց քաջալերելու նախորդ Վարիչ Մարմինը իր ապօրինի քայլերի մէջ: Այո՛, «փոր-

ձառու եւ գիտակից» մի ընկերոջ առաջին պարտականութիւնը այդ պիտի լինէր, որ չէ եղած: Այսու հանդերձ մենք դատապարտում ենք նախորդ Վարիչ Մարմին, որ իր շարունակական «խորհրդակցական ժողով»ներով աւելի ուրիշներից մղւելու հակամէտ է թւացել, բան թէ ինքը առաջնորդել, որով ե՛ւ գործը տուժել է կախած մընալով անպատասխանատու ընկերների տւած ուղիղ կամ սխալ խորհուրդներից:

Մասնաճիւղերից ոմանք հարցումներ էին արել մեզ՝ նախորդ կեդրոնի օրօք Կուսակցութեանս ունեցած ելեւմուտքի մասին: Որովհետեւ Կուսակցութեանս մէջ սովորութիւն չէ եղել շրջաբերականով յայտնել, այս անգամ Ս. Գ. Հնչակեան Գործադիր Յանձնախմբի նույնպէս անգամ եմք այդ ելեւմուտքը, որպէս զի հազորդեն իրենց շրջանք Մասնաճիւղերին:

\* \* \*

Ընկ. Ա. Նազարբէկի Փարիզից մեկնումը, ինչպէս հայտնուում է մեզ, այլրնդայլոյ մեկնութիւնների տեղիք է տւել: Այդ առթիւ յայտնում ենք, որ նրա հեռանալը երբէք չէ յառաջացել նախորդ կեդրոնի անդամներից ո՛րեւէ մէկի հետ ունեցած կարծիքի տարբերութիւնից կամ անհամաձայնութիւնից: Ընկեր Նազարբէկ մեկուսացել է անհատական-ընտանեկան տխուր պարագաների բերմամբ, պարագաներ, որոնց մասին կուսակցական գերազոյն շահ թելադրում է մեզ լուել:

\* \* \*

Ինչպէս տեսնում էք, ընկերներ, Կեդր. Վարչութիւնս շրջապատել է մեծ զժաբութիւններով, չկամութիւններով, չբաշտոյթութիւններով, որոնց կուրծք տալ, որոնց միջից անցնիլ ենք ստիպւած մեր ծանր, բայց եւ քա՛ղցր պաշտօնը վարելիս: Կուսակցական շրջապատի մէջ սովորական դարձած այս տխուր պարագաները, սակայն, չեն կարող յուսահատեցնել, լքել մեզ: Մենք մեր ամբողջ ոյժով պիտի աշխատինք, ինչպէս աշխատել ենք, գերազգուած կրքերը հանգարտեցնել եւ անիմաստ, անտեղի հակառակութիւնները լուցնել: Այդ իսկ նկատուծով, չերմայէս խորհուրդ ենք տալիս բոլոր Մասնաճիւղերին եւ ընկերներին որ աջակցեն մեզ մեր այս զժաբին պարտականութիւնը կատարելու գործի մէջ՝ խուսափելով ո՛րեւէ կերպով քաջալերելուց է.—րդ Ընդհ. Պատգ. Ժողովի գէժ բմբոստացող ընկերներին՝ նրանց հետ պաշտօնական յարաբերութիւն պահպանելով կամ նրանց ճանաչելով որպէս օրինաւոր Մարմին: Նախազգուշաց-

նում ենք բոլորիդ, որ էթէ հակառակ ներքին համերաշխութեան կապերը ամրապինդ պահպանելու համար մեր ի գործ դրած բոլոր ջանքերին, կը գտնենք ընկերներ կամ մասնաճիւղեր, որոնք կը յամառին շարունակել ընդհ. Պատդ. ժողովի որոշումները արհամարհելու եւ այդպիսով կուսակցութիւնը վարկաբեկելու իրենց միջին հնարիմացութիւններէ մէջ, կեղրոնական վարչութիւնս, որպէս բարձրագոյն պատասխանատու Մարմին, իր հետ ունենալով անշուշտ բոլոր ճշմարիտ եւ անկեղծ հնչակեանների անխառն մտահոսութիւնը եւ անվհատ աջակցութիւնը, պիտի իմանայ պահպանել անաղարտ պատիւը եւ գերագոյն շահը Սօցիալ-Գիւմօկրատ Հնչակեան կուսակցութեան, որ կոչուել է մեծ դեր խաղալ Հայ Ազգի ազատագրական մեծ գործի մէջ:

Այո՛, պէտք է դիտնան ամէնքը, որ 96-ի տխրահոյակ թւականը անդարձ անցած պացած է այս բազմատանջ կուսակցութեան համար:

Առանձին շրջաբերականի նիւթ պիտի դարձնենք նախկին կեղր. վարչութեան հրատարակած «Կոչ»ի դէմ լուծւած վարիչ Մարմնի կողմից ցոյց տրւած դիտումնաւոր հակառակութիւնների եւ թիւրք թերթերի միջոցաւ եղած վարկաբեկիչ յայտարարութեան առթիւ, մի յայտարարութիւն, որ ուղղակի դաւաճանութիւն էր ընդդէմ Հայկական արիւնոտ Դատին:

Սիրելի է մեզ յուսալ, ընկերներ՛ր, որ մեր գործունէութեան առջեւ յարուցւած այս խոչընդոտները փոխանակ ձեզ վհատեցնելու, փոխանակ ձեր շարքերի մէջ շիտթութիւն առաջացնելու, ընդհակառակը աւելի եւս պիտի խառցնէ ձեր ներքին կապերը եւ բոլորդ մէկ սիրտ եւ մէկ հոգի, բոլորելով կեղրոնական վարչութեանս շուրջը, նոր ու կենսունակ աւիւնով պիտի վարիք ձեր արիւնոտ դրօշին, մի դրօշ, որին իր աչքերն է ուղղել անցեալի եւ ներկայի տանջւած Հայութիւնը:

Վստահ ձեր կուսակցական առաքինութեան եւ հնչակեանի վայել պարտաճանաչութեան վրայ՝ ընդունեցէք մեր ընկերական սիրալիր օղջոյնները:

Ի Դիմաց Ս. Գ. Հնչակեան կուսակցութեան  
կեղրոնական վարչութեան

Ատեմաղպիք  
Վ. ԱՐՇԱԿՈՒՆԻ

Ատեմապետ  
Փ. ԱՐԱՄԱԶ

(Կնիք)

## ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

Տարիներէ ի վեր սրտիս ու մաքիս վրայ ծանրացած պարտականարութեան խոր գիտակցութիւնը եւ հոգիիս մէջ առկայժամ մըրիկը խրախոյս եղաւ վերջնապէս հրապարակ հանելու անմահն Փարամազի եւ իր ընկերներուն մահունան պատասխանատուութեան վրայ յոյս ախոյ սոյն փաստաթուղթը: Այս կերպով վե՛հ պարտականութիւն մը կատարած կ'ըլլամ եւ կը յուսամ թէ՛ Հնչակեան անմահ եւ գիտական գաղափարներով տողորուած թէ՛ Հնչակեաններ եւ թէ՛ Հայ հասարակութեան ողջմիտ տարրը մեծ հետաքրքրութիւնով պիտի կարդայ սոյն պատմական փաստաթուղթը, որ կապ ունի ընդհանրապէս Հայ ժողովուրդի պատմութեան հետ:

\* \* \*

Մի ոմն Մանուկ Գ. ճիգմէճեան անունով հակասօցիայիս մը, խեղաթիւրումներով լեցուն գիրք մը գրած է «Պատմութիւն Ամերիկահայ Քաղաքական Կուսակցութեան», 1930 թ., էջ 152-ին մէջ Հնչակեան Քսան Կախաղաններ խորադրին տակ կը գրէ\* թէ՛ «... 1913-ին Քէօսթէնճէի մէջ հաւաքուած Ռուսահայ Հնչակեաններէն Փարամազ, Վարազդատ, Սաղահ-Գիւլեան եւ մի քանի համակիր մասնաճիւղեր 8-10 ընկերներով գաղանարար ապօրինի կերպով կը գումարեն Ս. Գ. Հնչակեան Կուսակցութեան 7-րդ Ընդհանուր Պատգամաւորական ժողովը՝ առանց գիտութեան ու հաւանութեան Տաճկահայ Հնչակեան Կեդրոնական Վարիչ Մարմնոյն, մասնաճիւղերուն եւ ծանօթ ընկերներուն: Այս ժողովին մէջ կը մշակեն եւ միաձայնութեամբ կ'որոշեն զարկ տալ գաւաղրական գործունէութեան...»:

Նախ, մեր խորագնին քաղաքապիտական վերլուծումով մենք հասած ենք այն եզրակացութեան որ Առաջին Եւրոպական Պատերազմը ծագեցաւ ուղղակի Հայկական Հարցը թաղելու համար: Եւ ճիշդ ուսում է պատմական փաստերով, որ Քէօսթէնճէի Մեծամասնական ժողովի «գաւաղրական» որոշումը չէր պատճառը հայոց հարածանքներուն կամ Քսան Կախաղաններուն: Իթիբհատը՝ գաշնակցած գերման կայսերապաշտ Քայցրի կառավարութեան՝ ծրարած էր արմատախիլ տարադրել Տաճկահայ ժողովուրդը թրքահայկական գաւառներէն, եւ Առաջին Եւրոպական պատերազմը Գերմանիոյ կողմէ յղացուած էր ուղղակի այդ ցեղասպանութիւնը իրադրածելու հա-

\*Արտատպուած Հնչակեան Բողոքող հակատիսիփիին խմբակի կողմէ տպուած գրքէն, Պոստսն, 1920 թ.:



մար, որով թէ՛ թուրք կառավարութեան հայահարած և թէ՛ Գերման կայսերապաշտական ձգտումները պիտի յաջողին: Հետեւապէս Բէօտտէնճէի ժողովի յեղափոխական որոշումները ուղիղ հետեւանք էին Հնչակեան քաղաքական առողջ դատողութեանց, որ սակայն Հայ հասարակութիւնը չէր թափանցած թուրք և Գերման մութ քաղաքականութեանց. հասարակութիւն մը որ մղուած ըլլալով իր աօրեայ ապրելակերպի հարցերով և յետ մնալով քաղաքապիտական կամ պաշտնի զիւանապիտական բարձր հարցերով զրազելու, (ինչ որ կ'ընէր Հնչակեան Կեդրոնը) ինկած էր պահպանողական պրօպականդայի վտանգաւոր ծիւղակին մէջ:

Սոյն Շրջաբերականը վերստին կը տպադրենք ապացուցանելու համար, որ Բէօտտէնճէի պատմական ժողովը բացարձակ մեծամասնութիւն է եղած:

Ճիգմէճեան և իր նման տղէտներ թող կարդան և հասկնան որ իրենց բրածը պատմական խեղաթիւրումներ են և եղծանումներ Հնչակեան գործունէութեանց և պատմութեան հանդէպ:

Սոյն Շրջաբերականը պատմական անթիտելի փաստաթուղթ մըն է, որ Տաճկահայաստանը կործանելու, անոր Հայ բնիկ ժողովուրդը և ազգային դատը փճացնելու համար նախ պէտք էր պառակտել եւ յաղթահարել Հնչակեան կազմակերպուած Յեղափոխական Կուսակցութիւնը: Իթթիհատի գլխաւոր նպատակը ա՛յլ էր: Իթթիհատի անուղղակի կ'օժանդակէին Հայ պահպանողական տարրերը, առեւտրականներ, կղեր և Հնչակեան Բողոքող հոսանքը՝ մասնիչ Եասեանի ճանապարհով...: Եւ յազթուեցաւ Հնչակեան հաղարների հասնող անդամներով՝ բազմամասնաճիւղ Կուսակցութիւնը:

Նախ պէտք էր Հնչակեան Կուսակցութիւնը կործանել, (որուն քաղաքական գործունէութիւնը ոչ միայն ա՛ն ու սարսափ կ'ազդէր թուրք Իթթիհատին, այլև Եւրոպական քաղաքական կեանքին վրայ որոշ ազդեցութիւն կը ներդրածէր) անկէ յետոյ Տաճկահայաստանը, և ճիշտ այդպէս ալ եղաւ, նախ Հնչակեան Կուսակցութիւնը կործանեցաւ Թրքահայաստանի մէջ՝ ներքին պահպանողական պառակտումներով, բողոքով, մասնութիւնով, յետոյ Իթթիհատի հալածանքով կործանեցաւ Տաճկահայաստանը, որուն ստեղծագործող բնիկ Հայ ժողովուրդը մահացաւ անպատու՝ շարժարանքներով Արաբական անապատներուն վրայ...:

Հնչակեան Յեղափոխական գաղափարականը անպայման կը յաղթանակէր Թրքահայաստանի մէջ, ինչպէս որ յաղթանակեց Ռուսական Հայաստանի մէջ և թէ՛ ներքին պատակաւիչ ցեցեր ճիգմէճեան-

ներու, բողոքական պատուելիներու, առևտրականներու, պահպանողականներու, Վերակազմեալ Հնչակեաններու, մասնիչներու և անոնց ծիւղակը ինկած Հնչակեան Բարեջանեան և Սիրվարդ Բողոքող խմբակի նման չհարուածէին և գաւաճանէին այդ պանծալի պապափարական վեհութեան և յեղափոխական կազմակերպուած վեհոյժին:

Սոյն պատմական Շրջաբերականը երբ Ամերիկա գրկուած է, Ամերիկայի Հնչակեան Բողոքող Հոսանքը՝ կազմուած Պոստոնի մէջ 1920 թուին, Սիրվարդի և Բարեջանեանի ղեկավարութիւնով՝ առած և պահած են ճշմարտութիւնը քողարկելու նպատակաւ:

Փարամազի Կեղրոնին ղէմ բմբոստացող գաւաճան այս հոսանքը շարունակելով իր քայքայիչ ղերը մինչև Ս. Սապահ-Գիւլեանի Յունաստան 8-րդ Ընդհ. Պատգամաւորական ժողովին որպէս Ամերիկայի Հնչակեան գլխաւոր պատգամաւոր մեկնումը մեծ գրգռոյթաբանացուց այս գաւաճան հոսանքի մէջ, որոնք կը յաջողին վերապահել անոր մեկնումը Մոսկուա, որով Ընկ. Ս. Սապահ-Գիւլեան ամիսներով Յունաստանի Հնչակեան քրդպին մէջ ճանապարհածախախտ սպասումին մէջ հիւանդանարով և յուսահատելով կը վերադառնայ Ամերիկա, որ յետոյ այս տառապանքի արդիւնք շաքարխտէ վարակուած՝ մէկ տարի յետոյ կը մահանայ:

Իթթիհատը բուռն կերպով կը հայածէր Հնչակեան Ս. Սապահ-Գիւլեան, Փարամազ, Տօթթ. Պէննէ, որոնք Քեօսաէնճէի յեղափոխական մեծամասնական ժողովի ոչին ու սիրտը եղան: Անոնք վաղուց ծանօթ էին, որ Թալաթ փաշա Տաճկահայ ժողովուրդը արմատախիլ պիտի ընէր և տարազէր իր հայրենի հողէն: Աւա՛ղ, որ ստրկամիտ և պահպանողական ոչին մուտք գործեց նաև Հնչակեան յեղափոխական Կուսակցութեան մէջ ալ և փճացուց Տաճկահայ ժողովուրդը:

\* \* \*

Չգտնուեցաւ մէկը, որ ըննէր և հասկնար թէ արդեօք մասնիչ Եասեանի ետեւը ունէ անհատներ, խմբակցութիւններ կայի՞ն, որ մղեցին Եասեանի ընել մասնաւորապէս քսան Հնչակեաններու մասնութիւնը: Մենք գիտենք, որ Իթթիհատը կը կաշառէր և ունէր շատ լրտեսներ: Իթթիհատը ամենատիրիմ թշնամին էր անմահանուն ազգասէր Ս. Սապահ-Գիւլեանի, կը ճանչնար, որ Սապահ-Գիւլեան ամենահուժկու գործիչն ու պապափարական մեծ առաջնորդն է որ Տաճկահայաստանի ազատութիւնը և անկախութիւնը կը ջատագործէ: Կային հայեր՝ պահպանողականներ, որոնք հակառակ էին Սա-

պահ-Գիւլեանի անջատողական, անկախութեան գաղափարին եւ հե-  
տեւապէս Իթթիհատի հետ կամ անկախ կը զործէին ընդդէմ Ս.  
Սապահ-Գիւլեանի, այս պահպանողականները Հնչակեան Կուսակ-  
ցութեան մէջ թէ դուրս՝ պաշտպանեցին Արթիւր Եասեանը: Այս  
մատնիչը իր հետեւորդները ունեցաւ ամէն երկիրներու մէջ: Ամե-  
րիկայի մէջ Բողոքող Հնչակեան հոսանքը, ղեկավարութեամբ Յ.  
Բարեջանեանի եւ Սիրվարդի, յետոյ Մօրլեանի եւ Պոնտացիի, Ֆը-  
րանսայի մէջ Սեդրակ Քարեանի (Սեդրակ Գաբակէվուրեան, որ  
տարազրութիւններու ատեն թրքական դատարաններու մէջ կը դա-  
տէր Հայ թշուառներ): (Տես Ս. Սապահ-Գիւլեանի Շրջաբերականը):

Շատ տխուր դեր կատարեցին ասոնք ընդդէմ Ս. Սապահ-Գիւլ-  
եանի, հրատարակեցին ազատ գիրք մը եւ «Վերածնութիւն» անուն  
թերթ մը, եւ «Արդարութեան Չայն» ազատ թերթիկ մը, որոնց  
մէջ Պր. Սապահ-Գիւլեան կոչած է Սիրվարդ խմբագիրը, իր, յետոյ  
պանծացուցած ղեկավար ընկերը՝ Ս. Սապահ-Գիւլեանը:

Ուրեմն այս Բողոքող հոսանքը ուղղակի թէ անուղղակի կը զոր-  
ծեր մատնիչ Արթիւր Եասեանը հովանաւորող թուրք Իթթիհատի  
հետ, այսինքն հակա-Սապահական, որ ճիշտ ու ճիշտ ուզածն էր  
Իթթիհատ կուսակցութեան:

Հետեւեալը լրիւ կերպով կ'ապացուցանէ, որ Բողոքող Հոսանքը  
կը զործակցէր ծածուկ կերպով մատնիչ Եասեանի հետ:

Երբ Սիրվարդ լքելով Բարեջանեանը կը վերադառնայ Հնչակ-  
եան Կուսակցութեան մէջ, մի օր նամակ կը ստանայ Յ. Բարեջանե-  
անէն, որ կ'ըսէ թէ՝ ինչո՞ւ մեր միասնաբար գործելու ուխտդ դրժե-  
ցիր եւ յետ գացիր Հնչակեան Կուսակցութեան գիրկը: Սիրվարդ կը  
պատասխանէ «Դուք դրսէն ես ներսէն...», այսինքն քանդենք Սա-  
պահ-Գիւլեանը եւ Հնչակեանութիւնը, ճիշդ ինչ որ կը հետապնդէին  
Իթթիհատը եւ մատնիչ Արթիւր Եասեանը:

Արթիւր Եասեանի մատնութիւնով երբ ձախողեցաւ Թալաաթ  
եւ միւս գաղաններու սպանութիւնը եւ Թալաաթը սկսաւ տարազրել  
եւ սպաննել Տաճկահայ ժողովուրդը, կը նշանակէ, որ բոլոր անոնք  
որ Արթիւր Եասեանի հակա-Սապահ-Գիւլ գործով եւ խօսքով առաջ-  
նորդուած են, ասոնք բոլորը պատասխանատու են Տաճկահայաստա-  
նի ջարդերուն, որովհետեւ այնքա իրողութիւն է, որ եթէ Թալաաթ  
սպաննուէր՝ պիտի ձախողէր տարազրութիւնը եւ ջարդերը, քանի  
որ բոլոր վալիները եւ խայմախայմները չպիտի ստանային հեռագիր  
պատասխանատու ներքին Գործոց նախարարէ (որ սպաննուած է),  
եւ հետեւապէս չպիտի սարքուէր տեղահանութիւն եւ կոտորած:

Թուրքերը ապշած պիտի մնային մտածելով թէ Թալաթի սպանու-  
թիւնը մեծ պետական հարուած մըն է :

Որքան ալ որ Սիրվարդ կոչուած զանուկի մաշկով փաթթուած  
Հակա-Սապահ-Գիւլեան ճիւղը եւ մատնիչ Եասեանի համախոհը  
եւ գործակիցը զիտնալով որ իր անցեալ քայլերը դաւաճանական  
եղած են, եւ այժմ Եասեանի նման մեղայ ըսէ իր մեծանուն ընկերոջ  
յոսմբանին վրայ, զրէ ու խօսի Հնչակեան անունով, չէ կարելի ծած-  
կել իր քանդիչ դերը կամ Հնչակեան Կուսակցութեան հասցուցած վթ-  
նասները դարձանել: Սիրվարդ բողոքողը չի կրնար սրբել իր ճակտին  
սեւ մուրը, որ դաւաճան ու մատնիչ Եասեանի ճամբայով, անոր աղ-  
տոտ մեթոտով գործեց ընդդէմ անդուպական քաղաքակա Սապահ-  
Գիւլեանի, եւ որքան ալ որ զրէ եւ մարդիկ համոզէ որ զինքը զովեն,  
ստոնք չիւզի մը չափ նշանակութիւն չպիտի ունենան իր մատնիչի  
եւ կործանարարի կեղտոտ նկարագիրը մաքրելու:

Մէկը որ իղական եւ արական սեռերու յատուկ՝ անուններու  
տարբերութիւնը չդիտեր եւ ըլլալով արական իր վրայ կ'առնէ իզա-  
կան անուն՝ կը նշանակէ որ աշղպիսին հիւանդ ուղեղ մը ունի: Այդ  
հիւանդութիւնը զձուձ փառամոլութիւնն է, ոչ անհասի մը առողջ  
մտածելակերպը կը խաթարէ:

Սիրվարդը լաւապէս ճանչցողները զիտեն նաեւ, ոչ նա ունի  
մի այլ ուրիշ տղեղ նկարագրի արատ: Ան շատ ճարպիկօրէն իրեն  
գործիք կը դարձնէ անհատներ, ընկերներ եւ ինքը ետեւ կենալով  
այդ գործիքները կը ծառայեցնէ իր վատ ծրագիրներուն: Այսպիսի  
մի վատ դաւի գոհը եղած է այս տողերը գրաչարողը, երբ տարիներ  
տոաջ Հնչակեան տղարանի մէջ ըլլալով աշխատաւոր, մղուած չի-  
նարար աշխատանքի՝ կուսակցական բարձրացումը իր նշանարանը  
ըրած՝ դարանակալ սարքուած դաւը գուրս կը ձգէ զայն տղարա-  
նէն, այս դաւադրութեան հեղինակը եղած է Սիրվարդ կոչուած  
տխեղձ փառամոլը: Ստորեւ կուտանք այդ դաւադրութեան մէկ  
փաստաթուղթը: Ընթերցողը շատ լաւ կը հասկնայ թէ՛ թերթի մը  
սխալներուն պատասխանատուն խմբագիրն է եւ ոչ թէ գրաչարը, եւ  
այդպիսի սխալներու համար ալ ոչ մի տեղ լսուած չէ թէ գրաչար մը  
յուրս կը հանուի:

Ընթերցողը շատ լաւ կրնայ թափանցել նաեւ, որ սոյն պատմա-  
կան փաստաթուղթը հայ ժողովուրդին ներկայացնողը ըլլալով ճշ-  
մարիտ Հնչակեան մը եւ գատապարտօղ մը Սիրվարդ եւ Բարեջան-  
եան ազտօտ հոսանքին կուսակցաքանդ գործը՝ հալածուած է ասոնց  
կողմէ, որուն տխրագլեցիկ նկարագրութիւնը մի ուրիշ պրօչիւրի  
նրիթ պիտի կազմէ:



Այսօրուան դժբախտութիւնները երեկուան անհեռատես եւ դաւաճանական գործերի արդիւնքներն են, այս իմաստով ահա պարզեցինք սոյն շրջերականի հետ առնչութիւն ունեցող անցքերն ու անձերու արարքները, մէկ կողմէ անբասիր հայրենասէրներու անուան նետուած արատը սրբելու եւ միւս կողմէ դաւադիրները հանրութեան ծանօթացնելու:

Կայ նաեւ մի ուրիշ պարագայ: Այսօր, Սիրվարդ կոչուած դաւաճանը իր միջակ գրչով ջանալով իր շուրջը համախոհներ շահիլ, դարանակալ նախանձով, շարք մը Հնչակեան մտաւորականներ հետացնելու աշխատած է, հրապարակը իրեն համար ազատ թողելու մարմաջով, որոնք կ'աշխատակցին ուրիշ հայ թերթերու: Այս մեթոտով ալ ան նկրտած է ինքզինքը զրոյղ ներկայացնելով մտացութեան տալ իր տխուր անցեալը:

Ամերիկայի Հնչակեան կազմի մէջ յատուց եկած Բողոքոք Հոսանքը թուրքի յատուկ դեր կատարած է պառակտելով Հայ ժողովուրդի անդրանիկ քաղաքական եւ սօցիալիստ Հնչակեան վեհ կուսակցութիւնը:

Հայ յեղափոխութեան պատմութիւնը լրիւ հասկնալու համար մեծ նշանակութիւն ունի Փարամադի սոյն Ծրջարերականը:

Տանկաստանի արտաքուտած վարիչ Մարմինը.—

Արամ Այրզպաշեան

Շուտ (Հմայեակ Արամեանց) տէրօրով սպաննուած

Մուրատ Պոյանեան

Ն. Զաքարեան

Յետոյ կազմուած Վարիչ Մարմինը՝

Խուրէն Կարապետեան (կախուած)

Արծրունի (մեռած)

Գ. Կօզիկեան

Ս. ՍԱՊԱՀ-ԳԻԻԼԵԱՆ, որ կը հրատարակէ «Նոր Աշխարհ»

Կը հասկցուի, որքեմն, որ վերոյիշեալ հակակարգապահ Մարմինին էր որ հետեւեցան Ամերիկայի Բողոքոք Սիրվարդ եւ Բարեջանեան հոսանքը, եւ որոնք դեռ կուսակցական ատեանի քաջուած չեն մինչեւ այսօր:

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Սեպտ. 20, 1957, Ֆրէզնօ, Քալիֆորնիա





